

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱՋԱՆ ՀՕՐ
Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԲԵԹՂԵՏԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ
(19 Յունուար, 2025)**

*«Եւ երբ անոնք տեսան աստղը, չափազանց ուրախացան»:
(Մատթ. 2:10)*

Բեթղեհէմի Ս. Այրէն, Հոն ուր ծնաւ եւ յայտնեցաւ աշխարհի Անսկիզբն Որդին, եւ Հոն ուր «Անբաւելին երկնի եւ երկրի ի մսուր անբանից բազմեցաւ», Սիրոյ եւ խաղաղութեան ողջոյն ձեզ զաւակները Հայ Ազգին:

Այս գիշեր դարձեալ մեզ հետ եղէք ո՛վ հաւատաւոր Հայկեան զաւակներ, մեր նախնիքներու ջերմեռանդ հաւատքով եւ սիրով երկրպագելու Մանկացեալ Աստուածորդւոյն, եւ Անոր նուիրելու ձեր սիրտն ու հոգին, ձեր խունկն ու աղօթքը իբր նշան ձեր աննահանջ հաւատարմութեան. որովհետեւ ազգ սիրելի եւ պատուական, մենք խորապէս կը հաւատանք թէ մենք իբր ժողովուրդ, ինչ որ ունինք իբր ցեղային արժանիք, ազնիւ ու արժէքաւոր, կը պարտինք Անոր՝ որ այս գիշեր ծնաւ այստեղ, ծագելու համար մարդոց հոգիներու եւ բարոյական երկնակամարին վրայ իբր Արեգակ Արդարութեան եւ Սրբութեան:

Երկու հազար տարիներ առաջ, մեր Փրկչի Ծննդեան այդ գիշերը, աշխարհ կը տըլայտէր գերութեան, ատելութեան եւ վախի մէջ, եւ մարդկութիւնը անհրաժեշտ կարիքը ունէր վերջնականապէս ձերբազատելու այդ բոլորէն, սակայն եւ այնպէս արշալոյսը տակաւին շա՛տ հեռու էր: Մարդիկ բոլորովին յուսահատ կը փնտռէին յաւերժ կորսուած խաղաղութիւնը, ինչպէս մենք ներկայիս կ'ընենք: Այս օրերուն եւս, իմաստուն մարդիկ, ինչպէս անցեալին, կը փնտռեն աստղ մը որ զիրենք առաջնորդէ խաղաղութեան եւ անդորրութեան: Վիշտն ու ցաւը միշտ եղած են ու կան: Տառապանքը, անգթութիւնն ու անարդարութիւնը դժբախտաբար միշտ մեր հետ եղած են եւ պիտի մնան, սակայն երբ Սուրբ Ծննդեան Աստղը կը շողայ մեզի համար եւ մեր յոյսերը կը վերահաստատէ Քրիստոսով, այն ատեն, որքան ալ մութ ըլլայ ճամբան եւ ինչ վտանգներ ալ կանգնին մեր առաջ, վստահ եղէք որ Հայր Աստուած միշտ մեզի հետ է եւ մեզ երբեք պիտի չլքէ:

Արեւելքէն եկող Մոգերը, որոնք կ'ակնկալէին թագաւոր մը տեսնել պալատի մը մէջ, Մանուկ Յիսուսը տեսան անշնան ու պարզ Մսուրի մը մէջ, սակայն այդ գիշերուան Աստղը կու գար հաստատելու թէ իրենք գտած էին Ան, որ կը փնտռէին: Նոյնը եւս կրնայ ըլլալ մեր ակնկալութիւններուն հետ. մենք միշտ լաւագոյնը կ'ակնկալենք մեր անձերուն համար, սակայն այն ինչ կը խորհինք թէ լաւագոյնն է, կրնայ մեր հասողութենէն հեռու ըլլալ: Թերեւս երբեմն մենք հասնինք մեր նպատակին, սակայն չենք գտներ ճիշդ մեր ակնկալած ուրախութիւնը: Մենք միշտ պարտինք յիշել, որ կեանքը յաճախ կու գայ փորձել մեր հաւատքը, եւ մեր բռնած ճամբան յայտնի չէ թէ ո՛ր կ'առաջնորդէ մեզ:

Մոգերը իրենց առաքելութիւնը աւարտած նկատեցին, երբ գտան Մսուրին մէջ հանգչող նորածին Մանուկ-Արքան: Նոյնն է պարագան նաեւ իւրաքանչիւր քրիստոնեային: Ինչ ալ ըլլան մեր նպատակները, Աստուածորդին միշտ մեր սիրտերուն մէջ ունենալն է որ պիտի ամբողջացնէ զանոնք: Այս գիշեր, նման Մոգերուն, մենք եւս եթէ հաւատքով փնտռենք այդ Աստղը, անպայման պիտի գտնենք զայն, որովհետեւ Ծննդեան այդ սուրբ Աստղը հոն է բոլոր անոնց համար, որոնք իսկապէս տեսնել կ'ուզեն զայն: Եթէ մենք իս-

կապէս Փրկիչ մը կը փնտռենք, այդ Աստղը մեզ պիտի առաջնորդէ անոր: Եթէ մենք կ'ապրինք անիմաստ եւ անյոյս կեանք մը, Ծննդեան այդ Աստղը այս սուրբ գիշերին կը թելադրէ մեզ կրկին գտնել զինք, որպէսզի այդպէսով մենք եւս նման Մոգերուն վերագտնենք մեր ներքին անդորրութիւնը: Այսօր, բոլոր անոնք՝ որոնք կը հրճուին երբ տեսնեն Ծննդեան Աստղը, մարդիկ են՝ որոնք անհամբեր են անոր երեւնալուն, եւ այդպիսիները անկասկած բռնած են կեանքի ճիշդ ճամբան:

Այս սուրբ գիշերուան մէջ դարձեալ կը հնչեն զանգակները Բեթղեհէմի մեր տաճարին խոր ու թրթռուն, մեր մտահոգութիւններուն եւ ցաւերուն խառնելով իրենց երկնային մեղեդին, որոնց ձայնը լսելը ամբողջ դարեր եղաւ մեր պապերու իղձը, երազն ու ձգտումը:

Աւետարանները լուռ են Մոգերուն իրենց երկիրը վերադարձի մասին, սակայն որոշ է թէ Աստղը զոր տեսան այդ գիշեր, երբեք չդադրեցաւ շողալէ իրենց սիրտերուն մէջ: Նոյնն է պարագան բոլոր անոնց՝ որոնք կ'ուզեն եւ կը տեսնեն այդ Աստղը, եւ անոր լոյսը պիտի լուսաւորէ անոնց կեանքի ճամբան, դառնալով յոյսի ճառագայթ մը իրենց կեանքի մութ պահերուն: Ծննդեան գիշերուայ այդ Աստղը որոշ է թէ տակաւ պիտի մարէր ու անցնէր, սակայն ան պիտի շարունակէ միշտ շողալ մեր սիրտերուն մէջ, վերանորոգելով մեր հաւատքը դէպի Ան՝ որ է Տէրը մեր կեանքերուն եւ գոյութեան:

Աստուածորդին իր ծնունդով եղաւ մեզի պէս, մէկը մեզմէ. Ան քալեց եւ խօսեցաւ մեր հետ, հասկցաւ մեզ եւ երբ մարդը գտնուէր սխալ ընթացքի մէջ, Ան կու գար զայն ուղղելու եւ մարդոց սխալները սրբագրելու: Անկասկած առանց իրեն մեր գոյութիւնը անիմաստ էր եւ անորոշ, ուրեմն անհրաժեշտ կարիք մը կար Աստուծոյ Բանին գալու աշխարհ եւ մարդը դնելու ուղիղ ճամբու մէջ: Անկասկած քաղաքակրթութիւնը հին է, ինչպէս աւելի հին է մարդկային ցեղի պատմութիւնը, սակայն մեր Փրկչին Ծնունդը կու գար նոր նկարագիր եւ նոր տարազ տալու մարդկային պատմութեան, զայն բաժնելով երկու շրջաններու, Նախքան Քրիստոս եւ Յետ Քրիստոս: Ու այդ օրուրէն սկսեալ Աստուած կու գար մտնել մարդկային պատմութեան մէջ, կազմելու խումբը այն մարդոց՝ որոնք իրենց կեանքերը պիտի պատշաճեցնէին իրենց Վարդապետին ապրած կեանքի օրինակին, կեանք մը՝ ապրուած Աստուծոյ լոյսին եւ խօսքին մէջ. կեանք մը, որ պիտի գար գերազանցելու ինքզինք: Բեթղեհէմէն մինչեւ Գողգոթա Աստուածորդին մնաց իրա՛ւ Մարդ, անցնելով մեր բոլոր դժուարութիւններու եւ տուայտանքներու բովէն: Աստուծոյ խօսքը, Բանը մարմնացած էր իր մէջ եւ մարդը Աստուածացած՝ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

Այս գիշեր ծնող խաղաղութեան Իշխանին մօտ ինքնագիտակից, բնական վեհութիւն մը կար, որ փոխանակ արհամարհելու եւ ծիծաղելու մարդուն խեղճութեան եւ թերութիւններուն վրայ, գէշ կը զգար անոր համար, եւ իր կարգին կու գար ցոյց տալու անոր ճամբան գեղեցիկ եւ աստուածարեալ կեանքի մը, հրաւիրելով որ մարդիկ եւս ապրէին իր ապրած կեանքով, լի ճշմարտութեամբ, արդարութեամբ եւ սրբութեամբ: Աշխարհ միայն մէկ անգամ կը տեսնէր այդօրինակ բարոյախօս մը, որուն կեանքը համընթաց կ'ընթանար իր սկզբունքներուն, որովհետեւ Հայր Աստուած միշտ կը մնար բեւեռակէտը իր կեանքին. Ան զԱստուած իր Հայրը պիտի կոչէր եւ ինքզինք՝ Որդի Մարդոյ, որ կու գար ցոյց տալու վաւերականութիւնը աշխարհի բոլոր մարդոց հետ իր եղբայրութեան:

Աստուածորդին աշխարհ եկաւ բուժելու հիւանդները, կերակրելու անօթիները եւ

մխիթարելու վշտացեալներն ու տառապեալները, եւ ի՞նչ եղաւ անոր գլխաւոր պատգամը մարդոց իր երկրաւոր կեանքի ընթացքին. «Ձեր մեղքերը ներուած են», տարբեր ձեւերով. կինը՝ որ իր արցունքներով լուաց ու մազերովը չորցուց անոր ոտքերը, ի՞նչ ըսաւ Քրիստոս անոր. «Գնա՛ խաղաղութեամբ, եւ այլեւս մի՛ մեղանչեր»: Ի՞նչ պիտի ըսէր զինք խաչ հանողներուն. «Հայր ներէ՛ ասոնց»: Նոյնիսկ իր հետ խաչուող աւագակներէն մէկուն, որ զղջացած էր իր գործած մեղքերուն համար, պիտի ըսէր. «Այսօր դուն հետս դրախտ պիտի մտնես»: Անկասկած այս բոլորը միայն հիւանդները բուժել, անօթիները կերակրել եւ մարդոց մեղքերը ներել չէր, այլ աւելի Ան կու գար մարդկութեան վրայէն միանգամընդմիշտ վերցնելու այն բեռը, որուն ծանրութեան տակ մենք կը տուայտէինք: Եւ ի՞նչ պիտի ըլլար անոր պատասխան-կեցուածքը, «Ի խաչ հան զդա»:

Սիրեցեալ զաւակ Հայ Ազգի, ընդունէ՛ մեր սրտագին ողջոյնը Մարգարեալ Աստուածորդուն այս սրբազան ներշնչարանէն եւ նորոգէ՛ ուխտդ շարունակելու հետեւիլ Անոր քայլերուն, այդպէսով փառաւորելու հրաշալի վերածնունդդ: Ընդունէ՛ այս սրտագին ողջոյնը որ դարերով հնչած է Ս. Երկրէն եւ միշտ արձագանգած մեր երանեալ նախահայրերու սիրտերուն մէջ, որոնք ամէն տարի ցնծութեամբ կ'ողջունէին իրենց որդեգրութիւնը Երկնաւոր Հօր կողմէ:

Այս գիշեր ծնող Մանուկը՝ Աստուածորդին, ծնաւ իբր Օծեալ եւ Փրկիչ: Ան իր ծընունդով կու գար Մարդ-Արարածին բերելու Հայր Աստուծոյ անշափելի ու անսահման սէրը: Քրիստոս՝ Եսայի Մարգարէի գուշակած «Հրաշալի խորհրդականն» է, որ կու գար մեր մեղքերը, ցաւերն ու մտահոգութիւնները իր վրայ առնելու եւ մեզ միանգամընդմիշտ ազատելու մեր Ադամական մեղքերէն: Մարգարէներու պատգամած էմմանուէլը, Աստուած մեզի հետ է) 2000 տարիներ առաջ կը մարմնանար Բեթղեհէմի այս Մսուրին մէջ: Ադամով՝ Մարդը կը յայտնուէր երկրի վրայ, մինչ ի լրումն ժամանակի Աստուած էր որ կը յայտնուէր մարդկութեան, մարդու մարմնով: Հայր Աստուած որոշ ժամերու մէջ չէ որ եղած է մեզի հետ միայն, այլ միշտ, ինչպէս խոստացած էր ըլլալ մեր հետ, «Ամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի»: Աստուած մեզի հետ, մենք ալ Աստուծոյ հետ, այս պէտք է ըլլայ իւրաքանչիւր քրիստոնեայի, մանաւանդ Հայուն նշանաբանը բոլոր ժամանակներուն: Որովհետեւ անցնող դարերը ցոյց տուին թէ Ան միշտ մեր հետ էր, հետեւաբար նուագոյնը՝ որ կրնանք ընել մեր կարգին, մեր Իր հետ ըլլալն է:

Կը մաղթենք որ նորաբաց տարին աշխարհագրական այս շրջանին համար ըլլայ՝ իսկապէս խաղաղութեան եւ արդարութեան օրհնաբեր տարի մը, միանգամընդմիշտ հեռացնելով՝ հալածանքը, վախը, սարսափն ու կոյր ատելութիւնը այս Սուրբ երկրի բընակիչներու սիրտերէն: Սիրելի եւ հաւատաւոր հայորդիներ, թող այս գիշեր միացնենք մեր աղօթքները մեր Մայր Հայրենիքի անդորրութեան, ապահովութեան, բարգաւաճման եւ մեր ժողովուրդի աւելի լուսաւոր եւ փայլուն ապագայի մը համար: Թող Նորածին Հրաշք Մանկան սէրն ու բարեսրտութիւնը միշտ վառ մնան մեր ժողովուրդի զաւակներուն սիրտերուն մէջ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. ամէն:

**Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս,
Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ**